



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորր

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՒՅՍՈՒՐԻ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԿԱՐԿՏԱՅԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ





368.51


ԲՈՒՅՍՈՒՐԻ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԿԱՐԿՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ

16784
A $\frac{\pi}{23335}$

X



ՊԵՏՏՐԱՍԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՄԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Պատվեր № 1107

Գլուխիկ. № 1013 բ.

Տիրամայ—10,000

ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ՀԵՏՎԱՆՔՆԵՐԸ (ԳԼԽԱՎՈՐԱՎՈՒՄ ԿԱՐԿՈՒՏԸ)։

Տաք ու տոթ որվանից հետո, սովորաբար գետերի և լճերի, վրա մենք նկատում ենք մառախուղ, վորը դանդաղորեն բարձրանում ե վերև։

Այդ գոլորշիացումը, վորոշ բարձրության հասնելուց հետո, սառչում ե և դառնում ջրի կաթիլներ, թափվելով գետին վորպես անձրեւ Բալց յերբեմն այդ գոլորշիացումները, քամիների շնորհիվ, բարձրանում են ավելի վերև՝ 2-ից 3 վերստ, ուր անձրեալին կաթիլները ցըտից սառչում են և թափվում գետին վորպես կարկուտ։

Յերբեմն ուժեղ փոթորկի հետ միասին հեղեղն ու կարկուտը միջանի ժամկա ընթացքում վոչնչացնում են 100.000 դեսիատին ցանքսելու։ Ալդպիսի փոթորիկները գիտությունը անվանում ե ցիկլոն։ Ցիկլոնի բերած կարկուտը հավի, յերբեմն ազամբու ձվի մեծությամբ, բոլորովին վոշընչացնում ե ցանքսերը և յերբեմն ել սպանում դաշտում մանր անասուններ։

Յուրաքանչյուր տարի ԽՍՀՄ կարկուտը վոչնչացնում ե (լսկում ե) մոտ հարյուր միլիոն դեսիատին միայն ցանքս, չհաշվելով այդիները, բանջարանոցները և մյուս բուսական մշակույթները, վորոնք մնասվում են ավելի քան ցանքսերը։

Լինում են տարիներ, յերբ կարկտահարությունը ավելի խոշոր մնաներ ե պատճառում։ որինակ՝ 30 տարի սրանից առաջ Դոնի շրջանում և Հյուսիսալիքն Կովկասում կարկուտը վոչնչացը եց 2.000.000 դեսիատին հացահատիկների ցանքսեր։

Վերջին չորս տարվա ընթացքում ԽՍՀՄ-ում կարկը-
տահար են յեղել մոտ 7.000.000 դեսիատին ցանքու Արդ-
նշանակում ե, վոր յուրաքանչյուր 100 դեսիատին ցանք-
սից մոտ $2\frac{1}{2}$ դեսիատինը կարկտահար ե յեղել Յեթե-
այդ վերածելու լինենք ֆթերի, կպարզվի, վոր Միության
մեջ յուրաքանչյուր տարի գյուղացիությունը կորցնում ե
մոտ 30.000.000 փութ հացահատիկ. իսկ 4 տարվա ըն-
թացքում (1922—1925 թ) նա կորցրել ե վոչպակատ
113.000.000 փութ:

Մեզ մոտ՝ Հայաստանում 1927 թվին կարկտահար ե
յեղել 25.000 դեսիատին ցանքու, վրբի համար Պետապը
վճարել ե գյուղացիներին 288.000 ռուբլի:

Գյուղացիության գըպանը յուրաքանչյուր տարի կոր-
ցընում ե 30.000.000 ռուբլի կարկտահարությունից, իսկ
քանի-քանի տնտեսություններ կորցնում են իրենց բա-
րեկեցությունը յերկար տարիներով: 800.000 տնտեսու-
թյուններից յուրաքանչյուր տարի մոտ 100 հազար արն-
տեսությունը կորցնում ե կարկտահարությունից իր տմ-
բողջ բերքը և առանց կողմնակի ոգնության չի կարող ապ-
րել. իսկ մնացած 700.000 տնտեսությունը կորցնում ե
համարյա թե իր բերքի կեսը:

Ամեն մի քայլայված - տնտեսություն մեծ ցավ ե
պատճառում պետությանը. այդպիսի տնտեսություններին
պետք ե միջոցներ տալ սերմելու, յերբեմն ել միասհար-
կից ազատելու,

ՊԱՅՔԱՐ ԿԱՐԿՏԱՀԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ.

Կարկտի դեմ պայքարել չի կարելի, բայց կարկտա-
հարության պատճառած զնասի դեմ կարելի յե պայքարել
ալյահօվագրության ոգնությամբ:

Ապահովագրությունը փոխադարձ ոգնություն ե:

Ապահովագրությանը յուրաքանչյուրը վճարում ե կո-
պեկներ, բայց այդ կոպեկներից գոյանում են միլիոններ,

վորոնք վերադարձվում են նույն գյուղացիությանը կար-
կըտահարության, հրդեհի, անասունների անկման վնասները
բավարարելու, բայց վոչ թե կոպեկներով, այլ տասնյակ
և հարյուրավոր ոռոքիններով։

Խորհրդային իշխանությունը գեռես 7 տարի սրանից
առաջ, հողի համարնացման որենքում, մատնանշել ե, վոր
զուրաքանչյուր աշխատանքային տնտեսություն պետք ե
ապահովագրված լինի բոլոր տեսակի գժբախտություննե-
րից—շենքերը կրակից, անասունները անկումից և ցանք-
սերը կարկալից։

Յոթ տարի սրանից առաջ (1921թ.) խորհրդային իշ-
խանությունը սահմանեց գյուղացիության բարիքի ապա-
հովագրություն։

Շենքերի կրակից ապահովագրության և անասունների
անկումից ապահովագրության մասին պատմված ե ուրիշ
դրբույկներով։ Առևն գրքույկով մենք խոսում ենք միայն
ցանքսերի կարկտահարությունից ապահովագրության մա-
սին։

Պետական ապահովագրությունը, (կրճատ կերպով «Պե-
տապ») վճարում ե գյուղացիներին վոչ միայն կարկտա-
հարության պատճառած վնասները, այլ և փոթորկի և հե-
ղեղի վնասները, լեթե վերջիններն առաջացել են կարկ-
տահարության հետ միասին։

ՑԱՆՔՍԵՐԻ ԱՊՈՀՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.

Ցանքսերի ապահովագրությունը լինում է 2 տեսակ. —
պարտադիր կոպարային յեվ կամավօր։

Պարտադիր ապահովագրությունը սահմանվում է այն
գավառներում, ուր գավառական խորհուրդների համագու-
մարը կամ գավգործկոմը գտնում են անհրաժեշտություն՝ բայց
յեթե վորեւ գավառում սահմանված ե բուլսերի պար-
տադիր ապահովագրություն, ապա պետք ե ապահովագրել
բոլոր ցանքսերը, բացի պետության պատկանող ցանքսերից։

Պարտադիր կերպով ապահովագրվում են նաև այզիները, բանջարանոցները և այլ բուլսերը, լիթե այդ մասին կա կարգադրություն պետության կողմից:

Վորպեսզի ապահովագրեն ցանքսերը, հարկավոր և ունենալ յուրաքանչյուր գյուղում գյուղացիների ապահովագրական ցուցակ. առանց ցուցակագրական ցանկի չի կարելի գիտենար թե յուրաքանչյուր գյուղացի վճրքան և ինչ տեսակի ցանքս ունի և վճրքան պետք ե ապահովագին վերցնեն յուրաքանչյուրից: Ցուցակագրական ցանկերը պետք ե կազմվեն ոգոսասին և սեպտեմբերին:

Պետությունը գյուղացիներին ինչ միջոցներից պետք ե վճարեր ապահովագրական վարձատրություն այրված տան, ընկած անասունին և կարկտահարված ցանքսին, յեթե նրանցից չգանձեր միքանի կոպեկներ:

Պետապն իր ապահովագրական տարին սկսում ե հոկտեմբերի 1-ից: Գյուղացիության ամբողջ ցանքսերը հոկտեմբերի 1-ից համարվում են ապահովագրված: Ահա թե ինչու Պետապը կանխապես հոգ ե տանում ցուցակագրական ցանկեր կազմելու ոգոսատոս, սեպտեմբեր ամիսներին:

Ցուցակագրությունը կատարվում ե հետեւալ կերպով:

Այն տարի գյուղխորհուրդը կամ Պետապի գործակալը կազմում ե յուրաքանչյուր գյուղի համար ցանքսատերերի անվանական ցուցակ: Ցուցակը կազմելիս ամեն տարի ցանքսատերը պարտավոր է ցուց տալ գյուղխորհուրդին կամ գործակալին իր ցանքսի տարածության քանակությունը: Գարնանը ցանքսերի ստուգումը լինում է գյուղական ժողովում: այդ ժողովում յուրաքանչյուր գյուղացի հայտնում ե իր ցանքսի տարածության մասին: Գործակալը կարող է ստուգել տեղում: Ցանքսի տարածությունը չպետք ե լինի պակաս, քան ցուց ե սրված միասնարկի ցուցակում:

Գարնանը ստուգումից հետո պարզվում ե կոպարի հավելումը կամ պակասորդը. յեթե առաջացել ե հավելում,

նա պիտի հաշվնել հետագա տարվա հաշվին, իսկ յեթե գոյացել եւ պակասորդ, պիտք եւ առհաշվարկել հետագա տարվա կոպարին։ Հետևապես ամեն մի գրուղացի կարող եւ միշտ ել ուղղել ապահովագրական սխալը։ Մենք խորհուրդ ենք տալիս գրուղացիներին պահանջել իշխանությունից գարնանը կատարել ցանքսերի ստուգում և հետևանքի մասին կարգալ գրուղական ժողովում։ Այն ժամանակ ամեն մի գրուղացի կիմանա, թե ցուցակում քանի դեսիատին եւ գրված իր ցանքսը, և կարկտահարության վկան ստանալու գեղքում թյուրիմացություններ չեն լինի։ Ամեն մեկը կստանա այնչափ, վորչափ ունի նա ցանքս, Զպիտք ել յերբեք բազցնել ցանքսի տարածությունը։ Հաճախ լինում են դեպքեր, յերբ գրուղացիները դիտավորյալ կերպով փոքրացնում են իրանց ցանքսի տարածությունը։

**ԱՅՆԻՆԵՐԻ, ԲԱՆՉԱՐԱՆՈՑՆԵՐԻ, ԾԱՌԱՏՈՒՆԿԵՐԻ ՑԵՎ
ԱՅԼ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱ-
ԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ.**

Ծառատունկերը (պարտեզները) կարկտահարությունից վկան գումարում են ամենից շատ ծաղկման շրջանում։

Կարկուտը խանգարում է նրանց փոշոտման, և պըտուղը լինում է շատ ավելի քիչ, քան յեթե չվկաներ կարկուտը։ Բայց շատերն արդ պատճառի մասին չեն ել մտածում։

Պարտադիր կերպով ապահովագրվում են արդյունաբերական պարտեզները։ Արդյունաբերական պարտեզներ պիտք եւ համարել նրանք, վորոնց տարածությունը պակաս չե 600 քառակուսի սաժենից, և վորոնց միջդը, թեկուզ սահմանափակ չափով, հանգում եւ շուկա։

Կապալով տրված բոլոր այգիները համարվում են արդյունաբերական։

Բանջարանոցներից ել ապահովագրվում են պարտադիր կերպով միայն արդյունաբերականները։

Փոքրիկ պարտեզները, բանջարանոցները և ոլգիները, վորոնք բավարարում են միայն ընտանիքի պետքերին, պարտագիր ապահովագրության լենթակա չեն: Բայց 100 քառ. սաժեն այգիներն արգեն համարվում են արդյունաբերական, վորովինետև խաղողը միշտ ել ծախվում ե ուրիշին:

Այգիների և պարտեզների ապահովագրության ժամանակ տարածությունը պետք ե ճշտությամբ՝ ցուց տալ: Ամեն մի այգետեր այդ տարածությունը շատ լավ դիտե, վորովինետև կարող ե չափել նույնիսկ քայլերով:

Այստեղ, ուր այգիները, պարտեզներն ու բանջարանոցները պարտագիր կերպով չեն ապահովագրվում, պետք ե ապահովագրել կամավոր կերպով: Չե՞ վոր կարկուտն այգիներին հասցնում ե շատ զգալի և լերկարատե վասա: Խաղողի վորթը (վազը) ուժեղ կարկտահարությունից հազիվ կարողանում ե ուղղվել միայն Յ տարուց հետո:

ՑԱՆՔՄԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ.

Ամեն մի գյուղացի պետք ե գիտենա թե ինչ գումարով ե ապահովագրված իր ցանքը:

Հայաստանում սահմանված են հետեւալ նորմաները յուրաքանչյուր 1 գեսիատին ցանքսի համար—չալթուկ՝ 60 ռուբ., բամբակ՝ 80 ռուբլի, այգի՝ 60 ռուբլի, ծխախոռ՝ 80 ռուբլի, սերմահատներ (հացահատիկները)՝ 30 ռուբլի: Այս ցուցակից յերեսում ե, վոր Պետապն ապահովագրում ե կարկոցից վոչ լրիվ չափով, այլ բերքի մի մասը:

Լավ կլիներ ապահովագրել ամբողջ բերքը, բայց ամեն մի գյուղացի գիտե, վոր մի տեղ բերքը լավ ե լինում, մի ուրիշ տեղ վատ: Մինչև իսկ միենուն գյուղում մեկի բերքը լավ ե, մյուսինը վատ: մեկը լավ ե մշակել ցանքսը, մյուսը վատ, մեկը ժամանակին ե ցանել, մյուսը ուշ:

Հետեապես չի կարելի ապահովագրել ամեն մի գյուղացուն առանձին ըստ իր բերքի:

Ուրեմն հարկավոր ել լինում հաշվել 1 դեսիատինից միջին բերքը ամբողջ շրջանի համար և սահմանել ապահովագրական գումար (նորմա), նկատի ունենալով այդ միջին բերքը: Ցանքսը լրիվ կերպով ապահովագրելու բոլոր գյուղացիների ուժը չի պատի, չեն կարող վճարել ապահովագինը, կողուանան խոշոր հետնութեներ:

Ուստի Պետապն իր գոյության առաջին տարվանից սահմանել սերմի նորման, լուրաքանչյուր դեսիատինին 10 ոռուբի, վորովհետև Պետապն ուզում եր ապահովել կարկըտահարության դեպքում գյուղացու ցանած սերմը—վոչ պակաս 10 փութ 1 դեսիատինին (հաշվելով փութը 1 ոռուբի):

Սերմային նորման գյուղացուն ապահովում եր միայն բերքի $\frac{1}{4}$ -ի չափով: Սերմային նորման անբավարար է բերքաց, վորովհետև կարկտահարությունը վոչնչացնում եր մեծ մասամբ բերքի կեսից ավելին, լուրբեմն ել ամբողջ բերքը: Հետևապես հարկավոր եր բարձրացնել նորման: Հետևապես հարկավոր եր բարձրացնել նորման մինչև 30 ռ. դեսիատինին, վորը և կատարեց Պետապը: Այդ նորմայով գյուղացին ցանքսի կորստյան դեպքում կստանա վոչ թե միայն սերմը, այլ և միքիչ ել ուտելու համար: Ապահովագրական նորման, ինչպես ասացինք վերելում, չպետք ե պակաս լինի բերքի $\frac{1}{4}$ -ից յեզ ավել բերքի կեսից:

Բայց տարիներն իրար նման չեն: Բանը միայն բերքը չի, այլ և հացի զինը: Բերքի տարիներին 1 դեսիատինի միջին բերքը հաշվում ե 50—100 ոռուբի և ապահովագրական չափը (նորման) կկազմի արժեքի քիչ մասը. իսկ յերաշտ տարիներին ապահովագրական գումարը կլինի ավելի մեծ, քան բերքի արժեքը:

Այժմ ել կան տեղեր, ուր դեսիատինի բերքը հաշվում ե 50—60 ոռուբի և ապահովագրական գումարը 30 ոռուբի: Ուրեմն Պետապն ապահովագրում ե կեսը: Բայց այդպիսի տեղեր շատ քիչ են. մեծ մասամբ Պետապն ապահովագրում ե բերքի արժեքի $\frac{1}{3}$ -ի չափով:

Նախապես վորոշել ապահովագրական նորման շատ դժվար է, վորովիետն առաջուց պետք է գիտենալ 1 դեսիմատինի զուտ արդյունքը, ինչպես և թե վորքան հաճախ այդ վայրում տեղի լե ունենում կարկտահարություն, և վորչափ ել լինում նրա պատճառած վնասը:

Պետապի նորմաները հաստատվում են Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի կողմից, բայց գավառական խորհուրդների համագումարը կամ դավդործկոմը համաձայն տեղական պայմանների կարող ել իջեցնել կամ բարձրացնել արդ նորման, սակայն վոչ ավել $\frac{1}{5}$ մասի չափով, 30 ուռելու փոխարեն սահմանել 36 ուռելի:

Եեթե կարկուտն ամեն տեղ միանման վնասեր ցանքսերը, այն ժամանակ ապահովագրական վճարն ել միենույնը լիներ:

Իրականության մեջ կարկտահարությունը միքանի վայրերում լինում ե 3—4 տարենը 1 անգամ. մի ուրիշ տեղ 2 տարենը 1 անգամ և մի լերբորդ տեղ համարյա ամեն տարի:

Միության մեջ կան այնպիսի գլուղեր, ուր կարկտահարություն ամառվա ընթացքում լինում ե 2-ից 3 անգամ:

Մեզանում (Հայաստանում) լեռնոտ վայրերում կան տեղեր, ուր կարկուտ և տեղում տարվա ընթացքում 10. ից 14 անգամ:

Վարպեսզի ճիշտ գիտենալ, թե վորտեղ է հաճախ կամ սակավ լինում կարկտահարություն, հարկավոր ե յերկար տարիներ գրանցել բոլոր դեպքերը և ապա միայն դուրս բերել ճիշտ որերի թիվը տվյալ վայրի կարկտահարության:

ԱՊԱՀՈՎԱՎՃԱՐԻ ԶԱՓԸ.

Գլուղացին հեշտությամբ կարող է հաշվել, թե վորքան պետք ե մուծի ցանքսերի պարտադիր կոպարալին ապահովագրության ապահովավճար, յեթե նայի 19 ըդ եջի աղյուսակը:

Ապահովագրական վճարումն ըստ պարտադիր կոպա-
րային ապահովագրության բոլոր տեսակի բույսերի համար
միևնույն եւ Ամեն մի գյուղացի, վորն ապահովագրել ե-
իր ցանքսերը կոպարային ապահովագրության կարգով, ըս-
տանում ե ապահովագրական ծանուցագիր, ուր գրված ե,
թե նա վորքան պետք ե վճարի կարկտահարությունից:
Յեթե ծանուցագրի մեջ կա վորեե սխալ, պետք ե անմի-
ջապես հայտնի Պետապի գործակալին կամ գանձողին և
ցույց տա, թե ինչումն ե սխալը:

Ո՞Վ ԿԱՐՈՂ Ե ՈԳՏՎԵԼ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ.

Ամեն մի գյուղացի կարող ե իմանալ գործակալից, թե
ումը և վիր չափի արտօնություններ ե տրվելու, — վոր-
պեսզի հաշվի, թե արդյոք իր տնտեսությունն ստանալու
յեւ ապահովագրական արտօնություն թե վոչ:

Արտօնություն տրվում ե ամենաչքավոր տնտեսու-
թյուններին: Ամենաչքավոր տնտեսություններն ազատվում
են բոլորովին ապահովամարից. քիչ ունեորներին պակա-
սեցվում ե ապահովամարը կես չափով: Կարմիր բանակա-
լինների ընտանիքներն ազատվում են մեկ լեռուրդի չափով:

ԱՊԱՀՈՎԱՎՃԱՐԻ ՄՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ.

Կարկտահարության կոպարային պարտադիր ապահո-
վագրության կոպարի գանձումը կատարվում ե մյուս տե-
սակի պարտադիր ապահովագրությունների վճարումների
հետ միասին:

Կամավոր մուծման վերջնական ժամկետը նույնն ե,
ինչ վոր մյուս կոպարային ապահովագրություններինը:

Պետք ե ապահովամարը վճարել ժամանակին:

ԺԱՄԿԵՏԻՑ ՀԵՏՈ ԳՈՅԱՑԱՇ ՏՈՒՑԺԸ.

Վերջին ժամկետն անցնելուց հետո ապահովագրա-
կան վճարումներին ավելացվում ե տուժ, վորովիետեւ չը-
մուծված կոպարը դառնում ե հետնութիւ:



Տույժը բարդվում ե ալսպես—ով ուշացրել ե մեկ ամիս, նա վճարում ե 1 ռուբլուն 6 կոպ. տույժ, ով ուշացրել ե 2 ամիս, վճարում ե ռուբլուն 12 կոպեկ տույժ։

Ապահովագրական հետնույթը գանձվում ե հարկադրական (վարչական) կարգով։

ԻՆՉ ՊԻՏԻ ԱՆԻ ՑԱՆՔՍԱՏԵՐԸ, ՑԵԹԵԿԱՐԿՈՒՏԸ ԽՓՈՒՄ Ե.

Նո պետք ե 3 որվա ընթացքում հայտնի Պետապի գործակալին։ Յերբեք չի պատահի, վոր կարկտահար լինի միայն մեկ տնտեսություն։ Միշտ ել կարկտահար ե լինում ամբողջ գաշտը կամ նրա մի մասը։ Բոլոր ցանքսատերերին միասին Պետապի գործակալի մոտ զնալու կարիք չկա։ Կարող ե միայն մեկը գնալ գործակալի մոտ կամ հայտնել գյուղխորհրդին։ Գյուղխորհուրդը պարտավոր ե անմիջապես հայտնել գործակալին։ Յեթե կարկտահարությունը յեղել ե գարնանը, ապրիլ կամ մայիս ամիսներին, և յեթե գյուղացիները վորոշել են նորից ցանել կարկտահար յեղած գաշտը, անհրաժեշտ ե հայտնել այդ մասին գործակալին։ Այդ դեպքում պետք ե պահանջել գործակալից շտապ կերպով վորոշել վնասը, ինչպես ասում են, շտապ լուծարքել։ Յեթե գյուղացիները չեն ցանկանանասը վորոշել և կվերացանեն, այն ժամանակ գործակալը կամ գյուղատնտեսը չեն կարող վորոշել վնասի չափը։

Վերացանում են զանազան պատճառներով, որինակ՝ ցրտահարությունից, վորդը ուտելուց կամ սերմերի փշացած լինելուց։ Միայն կարկուտը չե վերացանման պատճառը։

Դարնանը, ապրիլին կարկուտն ալնքան ել վնասակարչե, կիսում են դեպքեր, յերբ կարկտին հարակից լինում ե և հեղեղ, ու կարկուտն ավելի քիչ վնաս ե պատճառում, քան թե հեղեղը։ Հեղեղը յերբեմն 10—15 ըոպելի ընթաց

քում ջուր ե դոյացնում, վորչափ չի լինում ամբողջ ա-
մառվա ընթացքում և վողողում ե ամբողջ ցանքսերը:

Կարկտահարության հետ միասին յերբեմն լինում ե
նաև փոթորիկ: Փոթորիկն ուժեղ կերպով խփում ե հասած
արտի հասկերն իրար, կոտրատում ե և հատիկները թա-
փում: Միքանի ըովելից հետո սկսում ե տեղալ հորդա-
ռատ կարկտախառն անձրեւ:

Կարկուալ կտրատում ե հացահատիկների ցողունները,
բայց այդ դեպքում ավելի պակաս մնաս ե պատճառում,
քան թե փոթորիկը:

ԽՆՉ ԴԵՊՔԲԻՄ ՊԵՏԱՊԸ ՎՃԱՐՈՒՄ Ե ՎՆԱՍԼ.

Պետապը բուկսերի ապահովագրությամբ կարկտահա-
րության մնասի հետ միասին վճարում ե նաև փոթորկի
ու հեղեղի մնասը: Ինչպես վերեռում ասացինք, Պետապը
գրա համար բնակչությունից հատուկ ապահովագին չի
վերցնում: (Յեթե կարկտահարված և հեղեղով մնասված ե
նույն հողը):

Այսպես թե այնպես, յեթե ցանքսատերը վճռել ե կար-
կտահար դաշտը վերացանել կամ հնձել վորպես անա-
սունների կեր, ապա ամենից առաջ այդ մասին պիտի
տեղեկացնի Պետապի գործակալին: Կգա գործակալը կամ
գլուղատնտեսը և կվորոշի մնասը, զորից հետո միայն
ցանքսատերն իրավունք ունի վերացանելու կամ հնձելու:

Վերացանելու համար ժամանակը հաշվում ե վոչ թե
որերով, այլ ժամերով: Այսողջ հարցը կախված ենթանից,
թե արդիոք ժամանակ կմ սպասելու գործակալին կամ
գլուղատնտեսին, թե վոչ: Վորքան քիչ ե ժամանակը, այն-
քան շուտ պիտի հայտնել գործակալին: Պետք ե աշխա-
տել այնպես անել, վոր վերացանելուց առաջ գործակալը
կամ գլուղատնտեսը տեսնեն մնասված ցանքսը:

Ուրիշ բան ե, յեթե վոչվոք չի մտածում վերացա-
նելու կամ հնձելու: Այստեղ շտապ լուծարքի կարիք չկար-

իհարկե, պետք ե հայտնել վոչ ուշ քան Յ-ըդ որը, բայց գործակալը կամ գլուղատնտեսը կարող են գալ կարկտահար յեղած տեղը վոչ ուշ հնձից։ Սակայն կարկտահար յեղած դաշտը մինչև մասսի վորոշելը չի կարելի արածացնել։ Յեթե անասունները վոտատակ տան կարկտահար յեղած ցանք-սը, անկարելի կլինի մասս վորոշել։ Հստ Պետապի կանոնների, սույն կանոնը խախտելու դեպքում Պետապն իրավունք ունի ապահովազրական վարձատրությունը չը-վճարելու։

ՎՆԱՍԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ.

Ամեն մի գիտակից ցանքսատեր դիտե, վոր ձմեռը չի կարելի վորոշել մասս, յերբ դաշտերը ծածկված են ձյունով։ Մինչդեռ մինչև այժմ ել միքանի գլուղացիներ ամառը պատահած կարկտահարության մասին լոռում են մինչև ձմեռ և անբավական են, վոր Պետապն իր ժամանակին չի վճարում ապահովազրական վարձատրությունը։

Վնասը պիտի վորոշել արդարացի կերպով, վորպեսզի ամեն մի գլուղացի ստանա իր ապահովազրական վարձատրությունը։

Լավ չե, յերբ գլուղացին ստանում ե պակաս. լավ չե նաև, յերբ զյուղացին ավելի լե ստանում։

Ապահովագրական վճարութները հաշված են շատ ճիշտ։ Յեթե Պետապն ավելի վճարի մի տարի, 2, 3 տարի, այն ժամանակ նա ստիպված կլինի ավելացնելու կարկտահարության ապահովագինը։

Ահա թե ինչու մասս վորոշումը շատ լուրջ խնդիր ե. այստեղ ե, վոր պետք ե՞ չ չափել մեկ կտրել։

Յեթե գլուղ ե գալիս Պետապի գործակալը կամ գլուղատնտեսը, նա պարտավոր ե ամենից առաջ ստուգել ցուցակով, թե ում ցանքսն ե կարկտահար յեղել։ Ամեն մի մասսվող գլուղացի շահազրդոված ե հալտնելու գործակութին, վոր իր ցանքսը կարկտահար ե յեղած։

Ալդ ստուգումների ժամանակ հաճախ .լարզվում ե, վոր դյուղացու ցանքսը ցուցակով գրված ե 2 դեսիատին, իսկ կարկտահար ե լեղել 2^{1/2} դեսիատին: Այդպիսի դեպքերում սովորաբար դյուղացին լուռ ե, վորովինետև նա զիտե, վոր գյուղատնտեսական միասնարկի ցուցակումն ել 2 դեսիատին ե գրված 2^{1/2} դեսիատինի փոխարեն: Վոչ վախենալ ե վոչ ել վիճել ե պետք այդպիսի դեպքերում, այլ պետք ե սխալն ուղղել, ցույց տալով ցանքսի ճիշտ տարածությունը:

Ստուգումից հետո գործակալը նայում ե ցանքսերը: Գործակալը վնասված ցանքսատիրոջ հետ միասին պետք ե շրջի և մեկ-մեկ նայի բոլոր վնասված ցանքսերն առանձին առանձին: Գործակալը բոլորը պետք ե զրի ակտի մեջ, վորպեսզի վնասը ճիշտ վորոշի: Ցանքսատիրը պետք ե ոգնի այդ բանում գործակալին: Նա մինչև գործակալի գործ պետք ե նայի կարկտահար ցանքսը, թե վորչափ ե վնասված և քանի^{0/0}:

Եերբ կգա գործակալը կամ դյուղատնտեսը, այդ բոլորի մասին նա կհայտնի նրանց, մնում ե միայն ստուգեր:

Պետք ե այդ նախապատրաստական աշխատանքը կատարել, վորպեսզի ոգնեն գործակալին և կամ դյուղատըն տեսին ճիշտ կերպով վորոշելու վնասի չափը:

Դյուղատնտեսը կամ գործակալը նախ նայում են ամբողջ վնասված տարածությունը և ապա վորոշում վնասված ցանքսի դեսիատինների թիվը. հետո վորքան ե վնասված այս կամ այն ցանքսը:

Դյուղացիների համաձայնությամբ վնասը կարելի լեկորոշել ամբողջի համար միասին: Ալդ արփում ե այն դեպքում, յերբ կարկուտը հավասարապես ե վնասել. բայց այդ շատ սակավ ե լինում: Կարկուտը տեղ.տեղ լինում ե խիտ, տեղ.տեղ լինում ե նոսը, կամ լինում ե խոշոր, կամ մանր: Ահա թե ինչու կարող ե պատահել, վորդաշտի մի ծալըում կարկուտը բոլորովին վոչնչացնե-

ցանքսը, իսկ մյուս ծալրում նրա հետքը հազիվ նկատելի լինի:

Վնասը վորոշելու համար անհրաժեշտ ե գիտենալ, թե ցանքսի վոր մասն ե մխասվել և վոր մասն ե մխում:

Դաշտում ցանքսերին նալելուց հետո գործակալը կազմում ե ակտը՝ վորոշելով ապահովագրական վարձարության չափը:

Արդարացի և շտապ մխասի վորոշումը շատ հեշտ բան չեւ: Պետք ե հարցաքննել մխասվողին, լավ լսել նրա պատասխանները և, վոր գլխավորն ե, անձամբ ստուգել, թե ճիշտ այդպես ե, ինչպես ցուց ե տալիս մխասվողը: Վնասի վորոշումը պետք ե լինի բացահայտ կերպով, վորպեսզի բոլոր դյուզացիները տեսնեն, թե այդ ինչպես ե կատարվում:

Գործակալը կարող է սխալվել, վորպեսզի սխալներ տեղի չունենան, Պետապը պարտավորեցնում ե մխասվող կողմին ունենալ իր ներկայացուցիչը մխասի վորոշման ժամանակ ներկա լինելու:

Այդ տեղյակ անձնավորությունը չպետք ե լինի մխասվողներից: Նա պետք ե անհատապես շահազրգուված չլինի: Այդպիսի մարդ ընտրում ե Պետապը նաև իր կողմից: Ազդյերկու տեղյակ անձնավորություններն ոգնում են գործակալին կամ գյուղատնտեսին մխասները վորոշելիս:

Ամեն տեսակի բողոքներ ու անբավականություններ մխասի գնահատության մասին պետք ե հայտնել Պետապի գործակալին ակտը կազմելու ժամանակ: Դործակալը պարտավոր ե ակտում գրանցել բողոքները, իսկ բողոքողը պարտավոր ե ակտում ստորագրել:

Ակտերն ուղարկվում են հայպետապի գրասենակը հաստատելու համար:

ՎՆԱՍԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ:

Կոպարացին ապահովագրության կանոնների համաձայն, Պետապը պարտավոր ե մխասը վճարելու ակտը կազմելուց հետո մի ամսվա ընթացքում:

Խոշոր կարկտահարության դեպքում վնասված վայրնեւ գալիս Պետապի տեսուչը. նա շտապի լուծարքի ժամանակ անմիջապես վնասված տնտեսություններին վճարում եւ ապահովագրական վարձատրությունը:

Այդ որինակ լուծարքի համար գրասենյակն անում եւ հատուկ կարգադրություն:

ՑԱՆՔՍԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՑԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.

Պետապը, ինչպես վերևում ասացինք, պարտադիր ապահովագրությամբ ապահովագրում եւ միայն դեսիատինի բերքի $\frac{1}{3}$ -ը կամ $\frac{1}{4}$ -ը հետևապես մնում եւ չապահովագրված բերքի $\frac{3}{4}$ ը:

Ցեթե կարկուտն ամբողջապես վնասել եւ 1 դեսիատին ցանքս, վորն ապահովագրված եւ 30 ռուբլով, գյուղացին առնվազն կկորցնի 50 ռուբլի:

Պետապն այսուհեղ ել ընդառաջ եւ գնացել գյուղացիներին, սահմանելով լրացուցիչ ապահովագրություն:

Ով ցանկանում եւ լրացուցիչ ապահովագրել իր ցանքը, նա պարտավոր եւ այդ մասին հայտնի Պետապի գործակալին. ավելի լավ եւ այդ անել վոչ թե անհատապես, այլ գյուղովի. թե գործակալի համար լավ եւ եւ թե. գյուղացիների համար հեշտ: Իսկ լեթե ամբողջ գյուղը չի ցանկանում, ցանկացողները պետք եւ հավաքվեն և ընտրեն իրենց ներկայացուցիչը, վորը խմբակի կողմից կընքում եւ ապահովագրությունը: Այդ ապահովագրությունը կոչվում եւ խմբակային:

Լրացուցիչ ապահովագրությամբ կարելի յէ ապահովագրել միջակ բերքը լրեվ արժեքով: Այդ նշանակում եւ լեթե ծ տարվա ընթացքում մեկ դեսիատինի միջակ բերքը լեղել եւ 60 փութ, ապա պիտի ապահովագրել վոչ ավել այդ քանակությունից: Գները պետք եւ վերցնել վերջին տարվանը: Բայց վորովհետեւ շուկայի գները բազմազան

են, պետք վերցնել կոռավերատիվներինը կամ պետ-հիմնարկ-ներինը, վորոնք հացահատիկ են մատակարարում:

Լրացուցիչ ապահովագրության մասին պետք ե մտածել դեռևս գարնանից, վորագեսզի գարնանն ամեն բան լինի պատրաստ: Գարնանն ամեն մի գլուղացի շատ աշխատանք ունի և քիչ դրամ (փող), իսկ կարկուտը չի սպասի:

Բացի պարտադիր և լրացուցիչ ապահովագրություններից կա նաև կամավոր ապահովագրություն կարկտահարությունից:

Կամավոր կերպով ապահովագրվում են ցանքսերը և այլ մշակութները:

Ամեն մի գլուղացի, վորը ցանկանում ե ապահովուգրել իր ցանքսը կամավոր կերպով, պետք. ե հայտնի Պետապի գործակալին: Գործակալը հարկ յեղած դեպքում նայում ե ցանքսը և ապա ստանում ապահովին, տալով նրան անդորրագիր:


Կամավոր ապահովագրության ապահովագինը միքիչ բարձր ե, քան պարտադիր կամ լրացուցիչ ապահովագրություն ապահովուգինը:


Կամավոր ապահովագրության առավելությունն այն ե, վոր ամեն մեկը կարող ե ապահովագրել իր ցանքսը ցանկացած գումարով:

Այդ բոլորից պարզ յերևում ե, վոր կարկտահարության ապահովագրությունը շատ լուրջ և կենսական դործ ե, կա ժամանակ, վոր Պետապը կսահմանի ցրտահարության, հեղեղների և փոթորկի ապահովագրություններ:

Փողովրդական ապահովագրությունը պետք ե լինի եժան և բոլորովին մատչելի: Առած կա՝ «Կոպեկը ոռւբլի կինապի»: Ապահովագրությունը հենց ալդ կոպեկն ե, վոր ինայում ե աշխատավոր գլուղացիության ոռւբլին:

1928/29 p. սահմանագործությունները կազմակերպվել են հարցում առաջին առաջարկությունները.





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0003691

[064₁]

A 23335
II